ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՈՒՆԻՍ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ե՞րբ է Խեչոն իր հեծյալներով մտել Վան.**

1) 1915 թ. մայիսի 7–ին
2) 1915 թ. մայիսի 5–ին
3) 1915 թ. ապրիլի 27–ին
4) 1915 թ. հունիսի 5–ին

2 **Ե՞րբ է ՀԿ(բ)Կ կենտկոմը բողոքել կովկասյան բյուրոյի պլենումի՝ Ղարաբաղյան հարցի վերաբերյալ հակահայ որոշման դեմ.**

1) 1921 թ. հուլիսի 12–ին
2) 1921 թ. հոկտեմբերի 12–ին
3) 1921 թ. հուլիսի 16–ին
4) 1921 թ. օգոստոսի 16–ին

3 **Ե՞րբ են անցկացվել ՀՀ նախագահական հինգերորդ ընտրությունները.**

1) 2003 թ.
2) 2008 թ.
3) 2013 թ.
4) 2012 թ.

4 **Ո՞ր թվականին է Արգիշտի I–ը, շարունակելով իր հաղթարշավը, հասել մինչև Պարսուա և Բաբելոնի երկիր.**

1) Ք. ա. 782 թ.
2) Ք. ա. 781 թ.
3) Ք. ա. 779 թ.
4) Ք. ա. 780 թ.

5 **Ե՞րբ է արգելվել հայկական մեհենագրության գործածությունը.**

1) IV դարում
2) II դարում
3) III դարում
4) V դարում

6 **Ե՞րբ է զոհվել հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը.**

1) 689 թ.
2) 683 թ.
3) 680 թ.
4) 685 թ.

7 **Ո՞ր թվականին է տեղի ունեցել Չմանկատուկի ճակատամարտը.**

1) 1242 թ.
2) 1238 թ.
3) 1243 թ.
4) 1236 թ.

8 **Ե՞րբ է Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատել արևմտահայերի ազգային կանոնադրությունը.**

1) 1860 թ. մայիսի 24–ին
2) 1863 թ. մարտի 17-ին
3) 1860 թ. մարտի 17–ին
4) 1859 թ. մայիսի 24–ին

9 **Թվարկված պարբերականներից ո՞րն է հրատարակվել Կալկաթայում.**

1) «Ազգասեր»
2) «Ազդարար»
3) «Լրո գիր»
4) «Տարեգրություն»

10 **Ո՞վ է սպանել Բաքվի նահանգապետ Նակաշիձեին.**

1) Արամ Երկանյանը
2) Արշավիր Շիրակյանը
3) Նիկոլ Դումանը
4) Դրոն

11 **Ո՞ր խորհրդային հանրապետության կուսակցական ղեկավարությունն էր դիմադրություն ցուցաբերում Անդրկովկասի դաշնության ստեղծմանը.**

1) Ադրբեջանի՝ Ն. Նարիմանովի գլխավորությամբ
2) Ռուսաստանի՝ Ի. Ստալինի գլխավորությամբ
3) Վրաստանի՝ Պ. Մդիվանու գլխավորությամբ
4) Հայաստանի՝ Ա. Մյասնիկյանի գլխավորությամբ

12 **Ո՞վ է Գյումրիում տեղադրված Մհեր Մկրտչյանի հուշարձանի հեղինակը.**

1) Յուրի Պետրոսյանը
2) Արտաշես Հովսեփյանը
3) Նորայր Կարգանյանը
4) Արա Շիրազը

13 **Որտեղի՞ց է սկիզբ առնում Արևմտյան Եփրատը.**

1) Սրմանց լեռներից
2) Ծաղկանց լեռներից
3) Խաչափայտի լեռներից
4) Ծաղկավետ լեռներից

14 **Ո՞ր կայսեր ուղարկած զորքն են հայերը Տրդատ II–ի գլխավորությամբ ջախջախել և վտարել Հայաստանից.**

1) Սեպտիմիոս Սևերոս
2) Կարակալլա
3) Նիգեր
4) Կալիգուլա

15 **Ո՞ր գավառում էր գտնվում Բողբերդ ամրոցը.**

1) Ծաղկոտն
2) Կոգովիտ
3) Բասեն
4) Բագրևանդ

16 **Ո՞վ էր հայոց իշխանն ու սպարապետը 748–750 թթ. ապստամբության սկզբին.**

1) Աշոտ Բագրատունին
2) Դավիթ Մամիկոնյանը
3) Արտավազդ Մամիկոնյանը
4) Սմբատ Բագրատունին

17 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.**
«Մենք այնպես մաքրազարդեցինք այդ շրջանը, որ ապագայում այնտեղ (հուզումներ).... այլևս տեղի ունենալ չեն կարող»:

1) Զեքի փաշան
2) Աշիր փաշան
3) Ազիզ փաշան
4) Քյամիլ փաշան

18 **Ո՞ւմ որոշումից է մեջբերված հատվածը.**

«Պատրաստ լինել իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կլինի կապվել բանվորագյուղացիական Ռուսաստանի հետ»:

1) Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների՝ Երևանում հրավիրված առաջին կոնֆերանսի
2) Ռազմահեղափոխական կոմիտեի Կարսի կոնֆերանսի
3) Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների՝ Բաքվում հրավիրված առաջին կոնֆերանսի
4) հայ բոլշևիկների Ալեքսանդրապոլի կոմիտեի

19 **Ինչպե՞ս էր կոչվում արևելահայերի Հայոց ազգային համախորհրդակցության ավարտից քիչ անց ձևավորված՝ 35 անդամներից կազմված մարմինը.**

1) Վարիչների մարմին
2) Ազգային բյուրո
3) Հայոց ազգային խորհուրդ
4) Ազգային ժողով

20 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Հունահռոմեական հեղինակները Արտաշես I–ի ստեղծած վարչամիավորներն անվանում էին ստրատեգիա:
բ. Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ հելլենիստական երևույթ է և հայոց մեջ տարածում է ունեցել այդ շրջանից:
գ. Վանատուրը հայոց դիցարանում հյուրընկալության աստվածն էր:
դ. Զրադաշտականությունն իր բնույթով միաստվածային կրոն է:
ե. Որոշ ուսումնասիրողների կարծիքով Նանեն եղել է նաև ռազմի դիցուհի:

1) բ, ե
2) գ, դ
3) ա, ե
4) բ, դ

21 **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ բնութագրում Սյունիքում և Արցախում 1720–ական թվականներին ծավալված ազատագրական պայքարի արդյունքները.**

ա. Կասեցրեց օսմանյան զորքերի՝ դեպի Արարատյան դաշտ արշավանքը:
բ. Ապահովեց Նադիր շահի հաղթանակը՝ Պարսկաստանից աֆղանական և թուրքական նվաճողներին դուրս քշելու գործում:
գ. Ազատագրական այդ պայքարը հավատ ներշնչեց սեփական ուժերի նկատմամբ:
դ. Ստիպեց պարսից պետությանն իր հետագա քաղաքականության մեջ հաշվի նստել հայկական մելիքությունների հետ, ճանաչել նրանց իրավունքները:
ե. Հայկական ուժերի տարած բազում հաղթանակների շնորհիվ հնարավոր եղավ մոտ կես դար թոթափել օսմանյան և պարսկական տիրապետությունները:
զ. Ազատագրական այդ պայքարը մեծապես բարձրացրեց հայ ժողովրդի ինքնագիտակցությունն ու ազատասիրական ոգին:

1) բ, դ, ե
2) ա, գ, զ
3) գ, դ, զ
4) ա, բ, ե

22 **Ինչո՞ւ շահ Աբասը թուրքական բանակի շարժման ճանապարհին ընկած հայկական բնակավայրերի բնակչությանը գաղթեցրեց Պարսկաստանի խորքերը.**

ա. Հայ վաճառականությանը տեղափոխելով Իրանի արևելք՝ նա որոշել էր արևելքում զարգացած մետաքսի առևտուրը փոխադրել դեպի Պարսից ծոցի շրջան, որից մեծ վնաս կկրեր Օսմանյան կայսրությունը:
բ. Պարսկաստանի սահմանամերձ շրջաններ տեղափոխված հայերը կզինվորագրվեին պարսկական բանակին և կկասեցնեին օսմանյան զորքերի առաջխաղացումը:
գ. Հայ որակյալ երկրագործներին ու արհեստավորներին բնակեցնելով Իրանի ներքին շրջաններում՝ նա նպատակ ուներ զարկ տալու իր երկրի տնտեսության զարգացմանը:
դ. Օսմանյան կայսրության համար այլևս իմաստ չէր ունենա ավերված շրջանների գրավումը, և թուրքական բանակը չէր շարունակի արշավանքը:
ե. Հայ վաճառականությանը տեղափոխելով Իրանի հարավային նահանգներ՝ նա որոշել էր հյուսիսում զարգացած մետաքսի առևտուրը փոխադրել դեպի Պարսից ծոցի շրջան, որից մեծ վնաս կկրեր Օսմանյան կայսրությունը:
զ. Օսմանյան բանակը դրանով կզրկվեր պարենից, օթևանի հնարավորությունից և ի վիճակի չէր լինի շարունակելու արշավանքը:

1) բ, դ, ե
2) ա, գ, զ
3) գ, ե, զ
4) ա, գ, դ

23 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը.**

ա. Քսենոփոնի զորքի անցումը Հայաստանի տարածքով
բ. դաշնակից հայ-պարսկական զորքերի կողմից Բաբելոնի գրավումը
գ. Սամոսատ մայրաքաղաքի կառուցումը
դ. Աքեմենյան տերության կործանումը
ե. Երվանդ I-ի կառավարման ավարտը
զ. Երվանդաշատ մայրաքաղաքի կառուցումը

1) բ
2) դ
3) զ
4) գ

24 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը.**

ա. Խորհրդա–թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դադարեցման մասին ԽՍՀՄ կառավարության որոշման ընդունումը
բ. Եվրախորհրդարանի կողմից 1915 թ. հայերի ցեղասպանության դատապարտումը
գ. Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության ավարտը
դ. Հայկական համաշխարհային կոնգրեսի գումարումը
ե. Կիպրոսի արտաքին գործերի նախարարի կոչը ՄԱԿ–ի ամբիոնից՝ Հայկական հարցը քննարկելու մասին
զ. Խորհրդային Հայաստանում ՀՕԿ–ի և ՀԲԸՄ–ի գործունեության արգելումը

1) դ
2) զ
3) գ
4) ե

25 **Կատարել համապատասխանեցում.**

ա. Կապադովկիա ներխուժած հռոմեական զորքի հրամանատարը
բ. Անկախ Ծոփքի վերջին արքան
գ. Տիգրան Մեծին հավատարմության երդում տված Մարաստանի թագավորը
դ. Տիգրան Մեծի կողմից մահապատժի ենթարկված Սելևկյան թագուհի

1. Սուլլա
2. Սելենե
3. Գոդերձ II
4. Միհրդատ
5. Արտանես

1) ա–1, բ–5, գ–3, դ–2
2) ա–5, բ–4, գ–3, դ–2
3) ա–1, բ– 5, գ–4, դ–2
4) ա–5, բ–4, գ–2, դ–1

26 **Համապատասխանեցնել պատմական իրադարձությունը, տարեթիվը, վայրը.**

N	Պատմական իրադարձություն	N	Տարեթիվ	N	Վայր
1	Կոստանդիանոս Մեծի կայսերական հրովարտակի ընդունումը	1	336 թ.	1	Գանձակ
2	Մազքութների Սանեսան թագավորի կողմից Հայաստանի մայրաքաղաքի գրավումը	2	371 թ.	2	Միլան
3	Վճռական ճակատամարտ, որն ամրապնդեց Պապի իշխանությունը	3	372 թ.	3	Վաղարշապատ
4	Ճակատամարտ, ուր հայերը կռվի նետվեցին «Քաջ Արշակի համար» բացականչություններով	4	335 թ.	4	Դվին
		5	313 թ.	5	Զիրավ

1)

1	5	2
2	1	4
3	4	1
4	2	5

2)

1	5	2
2	4	3
3	2	5
4	3	1

3)

1	5	2
2	4	4
3	3	5
4	2	1

4)

1	4	4
2	1	3
3	2	5
4	3	1

27 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. Հայկական 408–րդ դիվիզիան կռվել է Ռումինիայում, Հունգարիայում, Ավստրիայում և Չեխոսլովակիայում:
բ. Հնչակյան կուսակցության առաջնորդներից Ա. Նազարբեկյանը դարձել է կոմկուսի անդամ:
գ. Հայաստանում 1930–ական թթ. բռնաճնշումների է ենթարկվել 25 000 մարդ, որոնցից մեկ երրորդը գնդակահարվել է:
դ. Գերմանիան նպատակ ուներ կայծակնային պատերազմի միջոցով գրավելու ԽՍՀՄ-ը և հասնելու համաշխարհային տիրապետության:
ե. ԽՍՀՄ արագ արդյունաբերացման համար անհրաժեշտ միջոցները հնարավոր էր հայթայթել միայն երկրի ներսում:
զ. Առաջին երկու հնգամյակներում Խորհրդային Հայաստանում շահագործման էր հանձնվել 54 արդյունաբերական ձեռնարկություն:

1) ա, գ, զ
2) ա, դ, ե
3) բ, գ, զ
4) բ, դ, ե

28 Ե՞րբ է գրի առնվել հայերի ծագման մասին վրացական ավանդությունը.

1) IX–XI դարերում
2) XI–XIII դարերում
3) VI–VIII դարերում
4) V–VII դարերում

29 XIX դարի առաջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական զորքը ե՞րբ է գրավել Ախալքալաքի բերդը.

1) 1810 թ.
2) 1809 թ.
3) 1812 թ.
4) 1811 թ.

30 Ինչպե՞ս է կոչվել Տուրուբերանը Հայաստանի 591 թ. բաժանումից հետո.

1) Խորագույն Հայք
2) Մասն Մեծ Հայոց
3) Մեծ Հայք
4) Մեծ մասն Մեծ Հայոց

31 Ապրուստի միջոց հայթայթելու նպատակով 1933 թ. որքա՞ն ընտանիք լքեց Սևանա լճի ավազանի շրջանները.

1) 4750
2) 6750
3) 5570
4) 6570

32 Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.

«Հայոց թագավոր [……..]–ը ուներ միջակ հասակ, բայց հակված էր դեպի ամեն մի մեծ բան և մանավանդ դեպի պատերազմական գործերը: Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները հույների և հռոմայեցիների մեջ»:

1) Տակիտոսը
2) Ամմիանոսը
3) Ապպիանոսը
4) Արիանոսը

33 **Կարդալ Վահրամ Պահլավունուն ուղղված անեցիների դիմումից մեջբերված հատվածը և ընտրել ճիշտ շարունակությունը.**

«Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին, որոնք ….».

1) «տարապարտ կերպով գրոհում են մեր դեմ և կամենում են կողոպտել մեր երկիրը»:
2) «տարապարտ կերպով եկել են մեր դեմ և կամենում են հափշտակել մեր երկիրը»:
3) «ավազակաբար հարձակվել են մեզ վրա և ուզում են մեր երկիրը կողոպտել»:
4) «տարապարտ կերպով եկել են մեր դեմ և ուզում են գրավել մեր երկիրը»:

34 **Ընտրել վաղմիջնադարյան Հայաստանի՝ բացառապես անազատների դասին պատկանողներից կազմված շարքը.**

1) շինականներ, արհեստավորներ, ասպետներ, առևտրականներ
2) արհեստավորներ, ռամիկներ, առևտրականներ, շինականներ
3) առևտրականներ, ռամիկներ, ասպետներ, արհեստավորներ
4) ռամիկներ, ասպետներ, շինականներ, սեպուհներ

35 **Թվարկվածներից որո՞նք են Բաթումի պայմանագրի հետևանքներ.**

ա. Օսմանյան կառավարությունն ընդունեց և ճանաչեց Հայաստանի անկախությունը:
բ. Արագորեն զարգացան առևտրա–տնտեսական հարաբերությունները Թուրքիայի և ՀՀ–ի միջև:
գ. Թուրքիան զավթեց Արդվինը, Կարսը, Արդահանը, Օլթին, Կաղզվանը, Ախալքալաքը, Ախալցխան:
դ. Թուրքիան պարտավորվեց Ազգերի լիգայում պաշտպանել ՀՀ–ի շահերը:
ե. Թուրքիան զավթեց նաև Սուրմալուի գավառը, Ալեքսանդրապոլի և Կոտայքի գավառների կեսը, Երևանի գավառի 3/4 մասը, Շարուր–Ղարալագյազի 1/5 մասը:
զ. Թուրքիային մնացին Ալեքսանդրապոլը և երկաթուղին մինչև Ջուլֆա:

1) ա, գ, զ
2) բ, դ, ե
3) ա, գ, ե
4) գ, ե, զ

36 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Դիոգենես կայսեր գերվելը սելջուկների կողմից
բ. Լոռիի ասպատակումը Ալփ Արսլանի գլխավորած հրոսակների կողմից
գ. սելջուկյան պետության իշխանության հաստատումը Փոքր Ասիայում
դ. հայ խաղաղ բնակչության կոտորածը Մանանաղիի Սմբատաբերդ լեռան մոտ
ե. Փիլարտոս Վարաժնունու իշխանության ստեղծումը

1) բ, դ, ե, ա, գ
2) դ, բ, ա, ե, գ
3) բ, դ, գ, ա, ե
4) դ, բ, ա, գ, ե

37 **Ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել երրորդը.**

1) Հնչակյան կուսակցության միանալը ՀՅԴ-ին
2) ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովի հրավիրումը
3) ՀՅԴ հռչակագրի հրատարակումը «Դրոշակ» թռուցիկ թերթում
4) Հնչակյան կուսակցության ծրագրի հրատարակումը

38 **Կատարել համապատասխանեցում.**

Անուն

1. Ա. Վոլսկի
2. Ա. Խանջյան
3. Ն. Ռիժկով
4. Ս. Թովմասյան
5. Հ. Պողոսյան

Պաշտոն

ա. ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար
բ. ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար
գ. ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ
դ. ԼՂԻՄ–ում հատուկ կառավարման կոմիտեի նախագահ
ե. ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար
զ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ

1) 1–դ, 2–ա, 3–զ, 4–ե, 5–բ
2) 1–զ, 2–ե, 3–գ, 4–ա, 5–բ
3) 1–զ, 2–ա, 3–գ, 4–ե, 5–դ
4) 1–դ, 2–ե, 3–գ, 4–ա, 5–բ

39 **Թվարկվածներից որո՞նք են բնորոշ այլախոհին.**

1) գաղափարական պայքար էր մղում խորհրդային իշխանության և նրա գաղափարախոսության դեմ
2) խորհրդային իշխանություններից պահանջում էր պահպանել օրենքները և ԽՍՀՄ Սահմանադրությունը
3) խորհրդային իշխանության և նրա գաղափարախոսության դեմ պայքարում էր ուժային միջոցներով
4) անընդունելի էր համարում խորհրդային օրենքները և պաշտոնապես հռչակված արժեքները
5) պայքարում էր մարդու իրավունքների պաշտպանության համար

40 **Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ:**

1) Ք. ա. 743–713 թթ. մղված երեսնամյա պայքարի արդյունքում Վանի թագավորությանը թեև հաջողվեց վերականգնել իր դիրքերը, սակայն նա այլևս Առաջավոր Ասիայի տերություններից չէր:
2) Ք. ա. 735 թ. դեպի Վանի թագավորություն արշավանքի արդյունքում թեև Ասորեստանը չկարողացավ գրավել Տուշպան, սակայն վերականգնեց իր դիրքերը Առաջավոր Ասիայում:
3) Ռուսա II–ի դիվանագիտական հնարքը նպաստեց կիմերների՝ դեպի Փոքր Ասիայի արևելք տեղափոխվելուն:
4) Դեպի Վանի թագավորություն արշավանքի արդյունքում Թիգլաթպալասար III-ը չկարողացավ գրավել Տուշպան և Ասորեստանը դադարեց Առաջավոր Ասիայում Վանի թագավորության մրցակիցը լինելուց:
5) Սարգոն II-ը Ք. ա. 714 թ. արշավանքի արդյունքում կարողացավ գրավել Տուշպան և կրկին դարձավ Վանի թագավորության գլխավոր մրցակիցն Առաջավոր Ասիայում:

41 **Ընտրել ճիշտ պնդումները.**

1) Մինչև 1890-ական թթ. սկիզբը արմենականները միայն Արևմտյան Հայաստանում հիմնել էին 150-ից ավել կազմակերպական խմբեր՝ մոտ հազար անդամներով:
2) Նիկոլայ II–ի 1906 թ. օգոստոսի 1-ի հրամանագրով Հայոց եկեղեցուն վերադարձվեց խլված գույքը, հողերը, դրամը:
3) Կ. Պոլսում 1861 թ. կազմվել է առաջին մշտական թատերական խումբը՝ Պետրոս Մաղաքյանի ղեկավարությամբ:
4) Հայկական հարցի շուրջ ստեղծված միջազգային անբարենպաստ իրադրության պայմաններում հայ պահպանողական հասարակական հոսանքը 1880-ական թվականների կեսերից վերելք է ապրել:
5) Վանի 1895 թ. ինքնապաշտպանության ղեկավարներից էր Եղիշե քահանա Խաչատրյանը:
6) Առաջին հայ ֆիդայական խմբերի ղեկավարներից հայտնի են Մարգար Վարժապետը, Արաբոն, Արամ Աչըգբաշյանը և ուրիշներ:

42 **Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Բագրատունիների նստավայրի տեղափոխումը Դարույնքից Բագարան
2) Բագարատ Բագրատունու գահակալության ավարտը
3) Հովնան Խութեցու և Աշոտ ու Դավիթ Բագրատունիների գլխավորությամբ արաբների ոչնչացումը Տարոնում
4) Յուսուֆի գլխավորությամբ արաբական զորաբանակի ներխուժումը Հայաստան
5) Նկան ամրոցի հերոսական դիմադրությունն Աշոտ Արծրունու գլխավորությամբ
6) «Արյան լճի» ճակատամարտը

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Նժդեհի ուժերի կողմից Որոտանի կիրճում Նուրի փաշայի զորքերին ջախջախիչ պարտության մատնելը
2) «Թուրքական ազգային ուխտի» ընդունումը քեմալական խորհրդարանի կողմից
3) Արցախահայության 9-րդ համագումարը
4) ԱՄՆ-ի Սենատի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու Վիլսոնի առաջարկի մերժումը
5) Հայաստանի առաջին հանրապետության փաստացի ճանաչումը ԱՄՆ-ի կողմից

44 **Կատարել համապատասխանեցում.**

Ռուսաստանին անցած տարածք

Ա. Բեսարաբիա
Բ. Երևանի և Նախիջևանի խանություններ
Գ. Փոթի, Ախալցխա, Ախալքալաք
Դ. Լոռի, Փամբակ, Շամշադին, Գանձակ, Ղարաբաղ, Շիրակ
Ե. Կարս, Կաղզվան, Օլթի, Արդահան, Ալաշկերտ, Բայազետ

Պայմանագիր

1) Գյուլիստանի հաշտության պայմանագիր
2) Թուրքմենչայի հաշտության պայմանագիր
3) Բեռլինի հաշտության պայմանագիր
4) Բուխարեստի հաշտության պայմանագիր
5) Ադրիանուպոլսի հաշտության պայմանագիր
6) Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիր

Ա	Բ	Գ	Դ	Ե

45 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.**

45.1 Հայերը X դարի վերջերին կազմում էին Կիլիկիայի բնակչության մեծամասնությունը։

45.2 Կիլիկիայի հայկական պետության համար մեծ դեր ուներ նաև ռազմական նավատորմը, որի համար կառուցված հատուկ ամրություններից հայտնի էին Կոռիկոսի և Այասի ծովային բերդերը։

45.3 Ապլղարիպ Արծրունին Լամբրոն բերդը նվիրել էր Հեթում իշխանին, որն ամուսնացած էր նրա քրոջ հետ։

45.4 Խաչակիրներն առաջին անգամ հայտնվել են Կիլիկիայում Լևոն I իշխանի հոր՝ Կոստանդին I-ի կառավարման շրջանում։

45.5 Կիլիկիայի տարածքը բաժանված է երեք մասի. արևմտյան մասը Քարուտ Կիլիկիան է, հյուսիս-արևմտյանը՝ Լեռնային Կիլիկիան, իսկ հարավ-արևելյանը՝ Դաշտային Կիլիկիան։

45.6 Անիի Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ II–ը հաստատվել էր Կիլիկիայի սահմանագլխին գտնվող Պապեռոն քաղաքում։

Բ մակարդակ

46 **Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. Աքեմենյան տերության քսան մեծ վարչական միավորներից յուրաքանչյուրը կոչվում էր մարզպանություն:
բ. Հայ հեթանոսական կրոնի սպասավորները կոչվում էին քուրմ:
գ. Հայկազուն–Երվանդունիների գահակալության սկզբնական ժամանակաշրջանում երկրի արքայի կրած տիտղոսը կոչվում էր «Հայոց թագավոր»:
դ. Դեռ Գավգամելայի ճակատամարտից առաջ Հայաստանի տարածքում հիշատակվող վարչական երկու առանձին միավորներն էին Մեծ Հայքը և Ծոփքը:
ե. Երվանդունիների օրոք հազարապետը նաև երկրի Մեծ դատավորն էր:
զ. Մակեդոնացու արշավանքներից հետո Արևելքում սկսված ժամանակաշրջանը հայտնի է «հռոմեականություն» անունով:
է. Նախաքրիստոնեական շրջանից հայտնի գլխատուն շինությունները կոչվել են նաև հազարաշեն:
ը. Հայրենիքի սահմանների պաշտպանությունը կազմակերպելու համար Արտաշես I–ի ստեղծած չորս միավորները կոչվում էին զորավարություններ:
թ. Արտաշատը, Տիգրանակերտը և Անտիոքը միմյանց կապող ճանապարհը կոչվում էր «Արքայական ճանապարհ»:

1) ա, դ, ե, թ
2) բ, գ, է, ը
3) գ, դ, է, ը
4) բ, ե, զ, թ

47 **Գտնել ճիշտ պատասխանը.**
«Յոթ ազատ արվեստների» Քառյակ ենթահամակարգի բաղադրիչներն էին՝

ա. երաժշտություն
բ. քերականություն
գ. թվաբանություն
դ. երկրաչափություն
ե. ճարտասանություն
զ. տրամաբանություն
է. աստղագիտություն

1) բ, դ, ե, զ
2) ա, գ, ե, է
3) ա, դ, զ, է
4) ա, գ, դ, է

48 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից որո՞նք են ճիշտ.**

ա. Արցախից Ռուսաստան հեռանալու Հովսեփ Էմինի որոշման պատճառը Սիմեոն Երևանցու և տեղի ուժերի կողմից նրան չօժանդակելն էր:
բ. Զեյթունի 1862 թ. ապստամբության ժամանակ զեյթունցիների հետ օսմանյան կառավարության փոխզիջման գնալու պատճառը Ռուսաստանի կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելու սպառնալիքն էր:
գ. Թուրքիայի՝ Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշվելու գլխավոր պատճառը թուրք–ռուսական դարավոր հակամարտությունն էր:
դ. 1914 թ. հունվարին կնքված ռուս–թուրքական համաձայնագրի չիրագործվելու պատճառներից էր Բալկանյան երկրորդ պատերազմը:
ե. Անգլիան և Ֆրանսիան 1915 թ. ձեռնարկեցին Դարդանելի գործողությունը, որպեսզի կասեցնեն գերմանական զորքերի կողմից Կիլիկիայի ռազմակալումը:
զ. Ցարիզմի կողմից 1916 թ. հայ կամավորական ջոկատները լուծարելու գլխավոր պատճառը հայերի «ինքնավարական» և «անկախական» ծրագրերն էին:
է. Հայերի նկատմամբ Նադիր շահի դրական վերաբերմունքի պատճառներից էր հակառուսական պայքարում հայ բնակչության օժանդակությունը ստանալը:
ը. Բրեստ–Լիտովսկի պայմանագրի արդյունքում Ռուսաստանը կորցրեց նաև Կարսի և Բաթումի մարզերը:

1) ա, գ, ե, ը
2) ա, գ, դ, զ
3) ա, գ, զ, ը
4) բ, դ, ե, է

49 **Թվարկվածներից որո՞նք 1920 թ. Մայիսյան ապստամբության պարտության պատճառ չեն հանդիսանում.**

ա. Բոլշևիկները Երևանում ապստամբություն չէին նախատեսել:
բ. Ապստամբությունը տարբեր վայրերում միաժամանակ չսկսվեց:
գ. Բոլշևիկները չկարողացան օգտագործել ժողովրդական լայն զանգվածների աջակցությունը:
դ. Ապստամբության հաջողությունն ի սկզբանե կապվում էր Անտանտի օգնության և ոչ թե ներքին գործոնների հետ:
ե. Ապստամբությունը կրում էր լայնածավալ և զանգվածային բնույթ, որի պատճառով հնարավոր չեղավ այն ղեկավարել:
զ. Ապստամբության կենտրոնի պարտությունը կանխորոշեց նրա անհաջողությունը:
է. Հաղթանակի համար երկրում չկային լուրջ նախադրյալներ:

1) բ, դ, է
2) գ, ե, զ
3) ա, բ, զ
4) գ, դ, ե

50 **Հայոց կաթողիկոսներից ո՞վ է գահակալել հինգերորդը ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Բաբգեն Ա
բ. Սահակ Ձորոփորցի
գ. Ներսես Գ Տայեցի
դ. Ներսես Բ Բագրևանդացի
ե. Սահակ Պարթև
զ. Հովհաննես Ա Մանդակունի
է. Կոմիտաս Մամիկոնյան
ը. Գյուտ
թ. Հովհաննես Բ Գաբեղենացի
ժ. Հովսեփ Ա Վայոցձորցի

1) է
2) ա
3) դ
4) թ

51 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Թ. Նազարբեկյանի նշանակվելը Կովկասյան ճակատի գլխավոր հրամանատար
բ. Երզնկայի զինադադարի ստորագրումը Կովկասյան ճակատում
գ. Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումը
դ. Անդրկովկասյան Սեյմի լուծարումը
ե. Տրապիզոնում ընթացող թուրք-անդրկովկասյան բանակցությունների ավարտը
զ. Անդրկովկասի անջատվելը Խորհրդային Ռուսաստանից
է. Արամ Մանուկյանի գործուղումը Թիֆլիսից Երևան
ը. Սարդարապատի հերոսամարտի սկիզբը

1) գ, բ, է, ա, ե, զ, ը, դ
2) բ, է, գ, ա, զ, ե, ը, դ
3) գ, բ, ա, է, ե, ը, զ, դ
4) բ, է, գ, ա, զ, ե, դ, ը

52 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Արեգ–Միհրի տաճարի կառուցումը Գառնի ամրոցում
բ. հայ–պարթևական միացյալ ուժերի գլուխն անցած Տրդատի գալը Արտաշատ և նստելը հայոց գահին
գ. Տիգրան IV–ի զոհվելը սարմատական քոչվոր ցեղերի դեմ ճակատամարտում
դ. Տիգրան VI-ի բազմելը հայոց գահին
ե. Վաղարշ I Արշակունու գահակալության ավարտը Պարթևստանում
զ. Վաղարշի և Տրդատի գլխավորած պարթևական զորքի մուտքը Հայաստան և Հռադամիզդի վտարումը
է. Հռանդեայի հաշտության պայմանագրի կնքումը
ը. Արտաշատ քաղաքի ավերումը Կորբուլոնի կողմից
թ. Տրդատ I–ի թագադրումը Ներոնի կողմից
ժ. Արշակ I-ի գահակալումը Մեծ Հայքում

1) է
2) թ
3) դ
4) ը

53 **Կատարել համապատասխանեցում.**

Տարեթիվ

1. 1920 թ. հունվար
2. 1920 թ. ապրիլ
3. 1920 թ. մայիս
4. 1920 թ. օգոստոս
5. 1920 թ. սեպտեմբեր
6. 1921 թ. սկիզբ

Իրադարձություն

ա. Այնթապի ինքնապաշտպանության սկիզբը
բ. թուրք–հայկական պատերազմի սկիզբը
գ. Մարաշի գրավումը թուրքերի կողմից
դ. ՀՀ պատվիրակության գործուղումը Մոսկվա
ե. «Հայկական լեգեոնի» լուծարումը
զ. «Ինքնավար Սյունիքի» հռչակումը
է. Այնթափցիների՝ իրենց քաղաքը հարկադրված լքելը

1) 1–զ, 2–ա, 3–բ, 4–դ, 5–է, 6–ե
2) 1–ա, 2–գ, 3–դ, 4–բ, 5–է, 6–զ
3) 1–զ, 2–ա, 3–դ, 4–ե, 5–բ, 6–է
4) 1–ա, 2–գ, 3–բ, 4–ե, 5–դ, 6–է

54 **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ ներկայացնում 1836 թ. հրապարակված եկեղեցական կանոնադրության բովանդակությունը.**

ա. Հայությանը տալիս էր հոգևոր–մշակութային որոշ ինքնավարություն:
բ. Հայոց եկեղեցու տնօրինության տակ մնում էին բացառապես թեմական դպրոցները:
գ. Հայոց եկեղեցին զբաղվելու էր միայն դպրոցի, ծեսերի և այլ հարցերով:
դ. Ռուսական կայսրության տարածքում ստեղծվում էր հայկական հոգևոր 8 թեմ:
ե. Սահմանվում էին Հայոց եկեղեցու իրավասությունները պետական գործերում:
զ. Հայ ժողովուրդը ձեռք էր բերում կրոնական ինքնուրույն համայնքի կարգավիճակ:
է. Հայոց եկեղեցու տնօրինմանն էին թողնվում միայն այն հողերը, որոնց վրա կառուցվելու էին վանքեր և եկեղեցիներ:
ը. Հայության ընդհանուր ժողովը առաջադրելու էր կաթողիկոսի երկու թեկնածու, որոնցից մեկին պիտի ընտրեր Ռուսաստանի կայսրը:

1) դ, ե, զ, է
2) ա, գ, զ, ը
3) ա, բ, ե, ը
4) բ, գ, դ, է

55 **Ստորև տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

ա. Լենինգրադի կուսմարզկոմի առաջին քարտուղար Ս. Կիրովը սպանվել է 1935 թ. դեկտեմբերին:
բ. 1924 թ. վերագործարկվել են Երևանի գինու–կոնյակի «Արարատ», կաշվի երկու փոքր գործարաններ, ինչպես նաև բազմաթիվ այլ ձեռնարկություններ:
գ. 1929 թ. դեկտեմբերի վերջին հայտարարվեց նէպից հրաժարվելու ու կուլակությունը որպես դասակարգ վերացնելու քաղաքականությանն անցնելու մասին:
դ. 1928 թ. գործարկվել է Լենինականի հէկը:
ե. 1931 թ. մայիսի դրությամբ որպես «Կուլակ» ունեզրկվել էր շուրջ 1100 տնտեսություն:
զ. ԽՍՀՄ հերոս, օդաչու Սեգեյ Բուռնազյանը իրականացրել է 224 մարտական թռիչք և կործանել թշնամու 22 ինքնաթիռ:
է. Առաջին հնգամյակի տարիներին սկսվեց Քանաքեռհէկի շինարարությունը, որին հաջորդեց Հրազդան գետի վրա ևս մի քանի կայանների կառուցումը:
ը. Հայկական 390–րդ դիվիզիան մասնակցել է Կերչի մարտերին, կազմացրվել է 1943 թվականին:
թ. 1953 թ. նոյեմբերին ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար է ընտրվել Յակով Զարոբյանը:

1) ա, բ, դ, ը
2) բ, գ, ե, ը
3) գ, զ, է, թ
4) գ, դ, զ, է

56 **Բագրատունյաց Հայաստանի պետական կարգի վերաբերյալ պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Բագրատունի թագավորը կարող էր խորհրդակցել հայր մարդպետի, իշխանաց իշխանի, մաղխազի և սպարապետի հետ:
բ. Բագրատունի թագավորները ինքնակալ միապետներ չէին. նրանց իրավունքները սահմանափակված էին աշխարհաժողովի կողմից:
գ. Բագրատունիների օրոք Հայաստանը տարբեր թագավորություններից և իշխանություններից կազմված յուրահատուկ համադաշնություն էր:
դ. Հայոց կաթողիկոսը ճանաչում էր Բագրատունի թագավորի գերիշխանությունը:
ե. Բագրատունի թագավորների գահը ժառանգում էր ավագ որդին. թագավորի եղբայրները գահը զբաղեցնելու իրավունք չունեին:
զ. Պատերազմների ժամանակ մանր թագավորությունների զորքերը ինքնուրույն էին գործում. նրանք չէին ենթարկվում հայոց սպարապետին:
է. Իշխանաց իշխանին ենթարկվում էին արքայական կալվածքները տնօրինողները, պետական գանձարանը, երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները:

1) բ, դ, զ
2) գ, դ, է
3) ա, բ, է
4) գ, ե, զ

57 **Իրադարձությունը համապատասխանեցնել տարեթվին.**

1. 1461 թ.	4. 1514 թ.
2. 1465 թ.	5. 1547 թ.
3. 1555 թ.	6. 1467 թ.

ա. Չալդրանի ճակատամարտը
բ. Բյուզանդական կայսրության կործանումը
գ. Ջհանշահի գահակալման ավարտը
դ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցության գումարումը Ստեփանոս Սալմաստեցու կողմից
ե. Ամասիայի հաշտության պայմանագրի կնքումը
զ. Հայոց պատրիարքության հիմնադրումը Կոստանդնուպոլսում
է. Սմբատ Արծրունու օծվելը հայոց թագավոր

1) 1–զ, 2–գ, 3–ե, 4–դ, 5–ա, 6–է
2) 1–զ, 2–է, 3–ե, 4–ա, 5–դ, 6–գ
3) 1–բ, 2–է, 3–ա, 4–ե, 5–զ, 6–գ
4) 1–զ, 2–գ, 3–բ, 4–ա, 5–դ, 6–է

58 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

1) Անդրկովկասում Գ. Գոլիցինի փոխարեն նշանակված Ի. Վորոնցով–Դաշկովի զբաղեցրած պաշտոնը կոչվում էր Կովկասի կառավարչապետ:
2) Սասունում սուլթան Համիդ II–ի կազմակերպած հայկական կոտորածներից հետո մեծ տերությունների կազմած բարենորոգումների նախագիծը ստացավ «Մայիսյան բարենորոգումների ծրագիր» անունը:
3) Ֆիդայի հունգարերեն նշանակում է զոհ, այսինքն՝ ինքնազոհ:
4) Արևելյան Հայաստանում 1844 թ. ստեղծված վարչական միավորը կոչվում էր Կովկասի փոխարքայություն:
5) 1849 թ. ստեղծված և Երևան, Նոր Բայազետ, Նախիջևան, Ալեքսանդրապոլ ու Օրդուբադ գավառներն ընդգրկող վարչական միավորը Երևանի նահանգն էր:
6) Պատգամավորական Կենտրոնական ժողովը Հայաստանում ապրող հայերի ներկայացուցչական համագումարն էր:
7) Կովկասյան ճակատում հայազգի գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքովի գլխավորությամբ թուրքերի դեմ կռվող ռուսական զորամիավորումը կոչվում էր Կովկասյան կորպուս:
8) Ռուսաստանի հետադիմական վարչակարգի հակահայ քաղաքականության դեմ պայքարելու համար Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»:

59 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտեն ԽՍՀՄ կառավարությանն առընթեր կազմավորված մարմին էր:
2) Արթուր Մկրտչյանի նախագահությամբ ԼՂՀ պաշտպանության նպատակով ստեղծված մարմինը կոչվել էր ԼՂՀ Պաշտպանության խորհուրդ:
3) Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո Երևանում ստեղծված իշխանության մարմինը կոչվել է Հայաստանի փրկության կոմիտե:
4) 1925 թ. կազմավորված Գիտության և արվեստի ինստիտուտի բարձրագույն մարմինը կոչվում էր ինստիտուտի անդամների ընդհանուր ժողով:
5) 1990 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ ՀՀՇ շուրջը ձևավորված միավորումը կոչվում էր ‹‹Հանրապետություն››:
6) 1996 թ. ԵՄ և ՀՀ միջև կնքված փաստաթուղթը կոչվել է գործընկերության և համագործակցության համաձայնագիր:
7) ԱՄՆ-ում դաշնակցության ստեղծած Հայ դատի հանձնախումբը կոչվում է նաև Հայկական ազգային խորհուրդ:
8) Հայկական համաշխարհային կոնգրեսի առաջարկով կազմված պատվիրակության՝ ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալին ներկայացված փաստաթուղթը կոչվում էր հայկական հողային պահանջների վերաբերյալ հուշագիր:
9) 1996 թ. ԵՄ և ՀՀ միջև կնքված փաստաթուղթը կոչվել է բարեկամության և համագործակցության համաձայնագիր:

60 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

1) Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական զեկուցագրում պարթևական արշավանքի ձախողումն Անտոնիոսը բացատրում էր Միջագետքի տափաստաններում անհաջող ռազմական գործողություններ վարելու պարտադրանքով:
2) Հայաստանը հռոմեացիների ավերածություններից և զոհերից զերծ պահելու նպատակով Արտավազդ II–ը Ք. ա. 34 թ. որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:
3) Փոքր Ասիայում բռնկված պատերազմի ավարտից հետո հաշտության պայմանագրում Արտաշես I–ը կարողացավ հատուկ կետ մտցնել, որի շնորհիվ Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Փոքր Հայքի տարածքը:
4) Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես II–ի դեմ ապստամբած Կյուրոս Կրտսերը հունական 10–հազարանոց վարձկան բանակի օգնությամբ տապալեց եղբորը և հռչակվեց Աքեմենյան նոր գահակալ:
5) Վանի թագավորությունում ստրուկների թվաքանակը հիմնականում ավելանում էր բնական ճանապարհով, ինչպես նաև պարտքի դիմաց ստրկացման եղանակով:
6) Մագնեսիայի ճակատամարտում հռոմեական զորքերի պարտության հետևանքով ձևավորվեց Սելևկյան հսկայածավալ պետությունը:
7) Ք. ա. 92 թ. սկսված հռոմեա–պարթևական բանակցությունների արդյունքում Հայաստանի դեմ ուղղված պայմանագիր կնքվեց:
8) Տիգրանակերտի գրավման պատճառն այն էր, որ քաղաքը պաշտպանող օտարազգի վարձկանները, կաշառվելով Պոմպեոսի կողմից, հռոմեացիների առջև դավաճանաբար բացեցին դարպասները:
9) Տիգրան Կրտսերն ընդվզել էր Պոմպեոսի դեմ և վիրավորել նրա արժանապատվությունը, ուստի Պոմպեոսի կարգադրությամբ ձերբակալվեց ու ընտանիքի հետ գերեվարվեց Հռոմ:

61 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառահետևանքային կապեր.**

1) Հայ–եգիպտական 1337 թ. հաշտության արդյունքում մամլուքները պարտավորվեցին վերաշինել Կիլիկիայի՝ իրենց կողմից ավերված քաղաքները:
2) Զաքարեն իր գերված եղբորը՝ Իվանեին ստանալու դիմաց դադարեցրեց Շահ-Արմենների նստավայր Խլաթի պաշարումը և նահանջեց:
3) Նախարարների հետ Տիրանի ունեցած բարդ հարաբերությունների հետևանքով կորուստներ կրեցին Արծրունյաց և Բզնունյաց նախարարական տոհմերը:
4) Թեոդորոս Ռշտունուն ազատ արձակելու պատճառը Հայաստանը Բյուզանդական կայսրության ոլորտում պահելն էր:
5) Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառը ուշ միջնադարին բնորոշ ավատատիրական մասնատվածությունը և հայ իշխանների կենտրոնախույս ձգտումներն էին:
6) Մոնղոլա–մամլուքյան երկարամյա հակամարտության արդյունքը մոնղոլների պարտությունն էր:
7) Կոտմանի դաշտում տեղի ունեցած ճակատամարտի արդյունքը հայ-վրացական միացյալ զորքերի հաղթանակն էր:

62 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Բեհիսթունյան արձանագրության պարսկերեն բաժնում Հայաստանը կոչվում է Արմինա։
2) Հայկազուն–Երվանդականների թագավորությունը երկրորդ համահայկական թագավորությունն է։
3) Հնդեվրոպական նախահայրենիքն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհը, Միջագետքի արևմտյան, Փոքր Ասիայի արևելյան, Իրանական սարահարթի հյուսիսային շրջանները։
4) «Նաիրի» երկրանունը առաջին անգամ հիշատակվում է Ք. ա. XV դարում։
5) Թորգոմա տունը գտնվել է Եփրատի վերին ավազանում և հիշատակվում է դեռևս Ք. ա. XX–XVIII դարերում։
6) Վանի թագավորության գրային բարեփոխումը՝ տեղական սեպագրի ստեղծումը տեղի է ունեցել Իշպուինիի գահակալության սկզբնական շրջանում։
7) Վանի տերության բանակի կազմում Արգիշտի I–ի օրոք առանձնացվեց «արքայական գունդը»՝ հեծյալ զորամասերից բաղկացած ընտրյալ ուժերը։
8) Երվանդ Սակավակյացը հատել է սեփական պատկերով ոսկեդրամ, որը հասել է մեզ։
9) Դարեհ II Կոդոմանոսը Աքեմենյան տերության տիրակալ է դարձել Ք. ա. 336 թվականին։

63 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Հայաստանի խորհրդային իշխանությունը, խախտելով Երևանի դեկտեմբերի 2–ի իշխանափոխության համաձայնագիրը, ձևավորեց միակուսակցական վարչակազմ։
2) Հայաստանում խորհրդային վարչակարգը հաստատելու և ամրապնդելու գործընթացը կազմակերպում և ուղղորդում էր Հայաստանի խորհուրդների համագումարը։
3) Թուրքական զորքերի հարձակումը դեպի Բաքու սկսվեց 1918 թ. մայիսին, սակայն մինչև հոկտեմբեր ամիսը նրանց չհաջողվեց գրավել քաղաքը։
4) 1920 թ. կեսերին ՀՀ տարածքը կազմում էր շուրջ 160 հազար քառ. կմ՝ 3 մլն բնակչությամբ։
5) Սևրի պայմանագրի համաձայն՝ հայ–վրացական սահմանը որոշելու էր ԱՄՆ–ի նախագահ Վիլսոնը։
6) Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին 20 տարին լրացած ՀՀ քաղաքացիները՝ առանց սեռի, ազգության և կրոնական խտրականության, ընդհանուր, գաղտնի, հավասար և ուղղակի քվեարկությամբ։
7) Հայաստանի առաջին հանրապետությունում ուսուցչական կադրեր պատրաստելու համար 1919 թ. սեպտեմբերին բացվել է ուսուցչական սեմինարիա։
8) Հայաստանի առաջին հանրապետության ընտրված խորհրդարանն ուներ 72 անդամ։
9) Հայաստանի առաջին հանրապետությունը 1920 թ. աշնանն ուներ 40 000-անոց բանակ։

64 **Ընտրել սխալ պնդումները.**

1) Հրայր Դժոխքի կարծիքով կուսակցությունները միայն միջոց են ժողովրդի ազատագրական պայքարը կազմակերպելու համար:
2) Սայքս–Պիկոյի համաձայնագրով Օսմանյան կայսրության տարածքները բաժանվելու էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև:
3) Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը կնքվել է հայ մեծահարուստ Առաքել Դաղյանի ամառանոցում:
4) Աղաբաբյան դպրոցը հատկապես մեծ ճանաչում է ձեռք բերել Սերովբե Վիչենյանի տեսուչ եղած ժամանակ:
5) Մ. Խրիմյանն ու Մ. Փորթուգալյանը Բեռլինի վեհաժողովի վերջին օրը բողոք են ներկայացրել մեծ տերություններին:
6) Արմենականները եղել են հայրենի հողի վրա ստեղծված առաջին ազգային կուսակցությունը:
7) 1878 թ. հունիսի 1–ին Բեռլինում սկսված վեհաժողովն ընթացել է Մեծ Բրիտանիայի մշակած սցենարով:
8) Ազգային կուսակցություններից դաշնակցությունն առաջինն է, որ Հայկական հարցի լուծումը համարել է ամբողջական հայրենիքում հայկական պետության վերականգնումը:

65 **Վարդանանց ապստամբության հետ կապված իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Արտաշատի եկեղեցական ժողովի գումարումը
2) հայ նախարարների ժամանումը Տիզբոն՝ Հազկերտ II–ի արքունիք
3) հայ նախարարների՝ քրիստոնեության առերես ուրացումը Տիզբոնում
4) ապստամբների կողմից կառավարության կազմումը
5) «Հավատո ուխտի» կնքումը Վասակ Սյունու, տանուտերերի և ավագ սեպուհների մատանիներով
6) գերի վերցված պարսից մոգերի մահապատիժը Զարեհավանում
7) Անգղի եկեղեցին քանդելու փորձը պարսից զորքի և մոգերի կողմից
8) բուն Աղվանքից եպիսկոպոսների հետ հազարապետի գալը Այրարատ

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Անդրանիկի կամավորական ջոկատի կողմից Բիթլիսի գրավումը
2) Սարիղամիշի ճակատամարտի ավարտը՝ թուրքական բանակի ջախջախումը
3) Դրոյի կամավորական ջոկատի կողմից Խնուսի գրավումը
4) Նազարեթ Չավուշի սպանությունը
5) Վռամյանի և Իշխանի դավադիր սպանությունը
6) Համազասպի կամավորական ջոկատի կողմից Խիզանի գրավումը
7) հայկական ջարդերի կապակցությամբ Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի հանդես գալը բողոքի հայտարարությամբ

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Հայ–վրացական սահմանազատման մասին վերջնական համաձայնագրի ստորագրումը Թիֆլիսում
2) «Լեռնահայաստանի» վերանվանումը Հայաստանի Հանրապետության
3) Միջագետքից հայ գաղթականների առաջին խմբի տեղափոխվելը Խորհրդային Հայաստան
4) հայ կինեմատոգրաֆիայի առաջնեկ կինոնկարի ցուցադրումը
5) Լոզանի կոնֆերանսի ավարտը
6) Հայհեղկոմի «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանի հրապարակումը
7) «Նոր եկեղեցի» կազմակերպության պառակտիչ գործունեության դատապարտումը Հայոց եկեղեցու Գերագույն հոգևոր խորհրդի կողմից

68 **Հեթանոսական աստվածների պաշտամունքի գլխավոր կենտրոնները համապատասխանեցնել աստվածների անուններին.**

Ա. Տիր
Բ. Անահիտ
Գ. Արեգ–Միհր
Դ. Նանե
Ե. Վահագն
Զ. Արամազդ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

1) Դարանաղյաց գավառի Անի ամրոց
2) Դերջան գավառի Բագառիճ ավան
3) Տուրուբերան նահանգի Աշտիշատ ավան
4) Եկեղյաց գավառի Թիլ ավան
5) Այրարատ նահանգի Երազամույն վայր
6) Շիրակ գավառի Անի ամրոց
7) Եկեղյաց գավառի Երիզա ավան

69 **Կատարել համապատասխանեցում.**

Ա. Ծոփքի վերակացու, որը սպանեց Արիստակես կաթողիկոսին
Բ. Արշակ II-ին Մաժակ հրավիրած և Օլիմպիայի հետ նրան ամուսնացրած կայսրը
Գ. պարսից արքայի հետ «Ամոթալի» պայմանագիր կնքած կայսրը
Դ. Տիրան թագավորին կուրացրած Ատրպատականի մարզպանը
Ե. Սպարապետ, ում պահանջով Վարազդատ արքան հեռացավ Հայաստանից
Զ. Վահանանց ապստամբության սկզբում Ատրպատական փախած Հայաստանի մարզպանը
Է. Հայոց սպարապետ, որը Մեծ Հայքի Արշակունյաց թագավորների ոսկորները վերաթաղել է Արագած լեռան լանջին

1) Արքեղայոս
2) Հուլիանոս Ուրացող
3) Կոստանդիոս II
4) Վասակ Մամիկոնյան
5) Վարազ
6) Մանվել Մամիկոնյան
7) Հովիանոս
8) Ատրվշնասպ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.**

70.1 Հայաստանի անկախության հանրաքվեից հետո՝ նույն տարվա սեպտեմբերին, Հայաստանի ՆԳՄ (ՆԳՆ) կառույցում ստեղծվել է Հատուկ զունդը:

70.2 1991 թ. դեկտեմբերին ստեղծվող ԱՊՀ-ն պետք է ունենար խորհրդակցական-համաձայնեցման գործառույթներ և օժտված չէր լինելու օրենսդրական, գործադիր ու դատական լիազորություններով:

70.3 ՀՀ կառավարությունը 1992 թ. հունվարի 28-ին ընդունել է ‹‹ՀՀ պաշտպանության նախարարության մասին›› պատմական որոշումը:

70.4 ՀՀ սահմանադրության նախագծի մշակմամբ զբաղվում էր 1990 թ. դեկտեմբերին ստեղծված ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովը:

70.5 Ապրիլյան Քառօրյա պատերազմում Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը արդիական սպառազինությունը և տեխնիկան ձեռք էր բերել Ռուսաստանի Դաշնությունից, Իսրայելից, Ուկրաինայից:

70.6 1990 թ. նոյեմբերին ընդունված առաջին սահմանադրական օրենքով մինչև ՀՀ նոր սահմանադրության ընդունումը դադարեցվում էր Անկախության հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին հակասող դրույթների գործողությունը: